*Երվանդ Ազատյան.*

# «ԱՐՑԱԽԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՅՔԱՐՆ Է»

Արցախի կապակցված բարեսիրական հերթական այցելությունից հետո Հայաստանում գտնվող ամերիկահայ հասարակական գործիչ, ՌԱԿ-ի կենտրոնական վարչության անդամ և ժամը դիվանի ատենապետ, գրող, գրականագետ և գրաքննադատ Երվանդ Ազատյանը Կիպրոս մեկնելուց առաջ ՀՌԱԿ հանրապետական վարչության գրասենյակում հանդիպել լրագրողների:

Նա նշեց, որ ՌԱԿ-ը հիմնականում հավանություն է տալիս Հայաստանի կառավարության վարած արտաքին քաղաքականությանը, և դրա վկայությունն են օգոստոսին Լևոն Տեր-Պետրոսյանի ԱՄՆ կատարած այցելության ընթացքում կուսակցության գործադրած ջանքերը նրան նախագահավայել ընդունելություն կազմակերպելու հարցում:

Ինչ վերաբերում է Ղարաբաղի ճակատագրին, ապա բոլոր կուսակցությունները, անկախ իրենց ունեցած գաղափարախոսական տարբերություններից, այս հարցում միակարծիք են. Ղարաբաղը իրավունք ունի ինքնիշխանության: Եվ ամբողջ արտասահմանի հայությունը պետք է անի ամեն բան Արցախին սատար կանգնելու համար: Սա մասնավորապես մեր կուսակցության համար ամենանվիրական իրականությունն է: Ղարաբաղը հայ ժողովրդի վերջին պայքարն է հայոց պատմության վերջին սահմանագծի վրա: Հետևաբար, երբ հարցը վերաբերում է Արցախի ինքնապաշտպանությանը, ապա բոլորս էլ դառնում ենք նրա զինվորը, անկախ այն բանից, թե աշխարհի որ անկյունում ենք ապրում:

Անդրադառնալով ՌԱԿ-ի պառակտմանը, նա ընդգծեց, որ կուսակցությունը դրսում նման խնդիր չունի: Միայն ՌԱԿ-ի հայաստանյան մասնաճյուղում է պառակտիչ շարժում ընթանում: Դա ընդհանուր երևույթ է բոլոր կուսակցությունների համար, և յուրաքանչյուրը ներքին տարաձայնությունները հարթելու իր ձևն ունի: ՌԱԿ-ը անցման այս շրջանում նախընտրում է դրա քաղաքակրթված ուղին և իր դիրքերը պաշտպանում է հենվելով ճշմարտության վրա: Դժբախտաբար, հնարավոր չէ նախապես ճանաչել կուսակցության շարքերն ընդունվող յուրաքանչյուր մարդու: Միայն ժամանակի ընթացքում է հայտնի դառնում նրա ով լինելը: Այդպես եղավ, որ որոշ մարդիկ ազնիվ մղումներով չէին անդամագրվել ՌԱԿ-ին, այլ որոշակի առաքելություններով, և ի չարս էին օգտագործում կուսակցության թույլ օղակները: Այդպիսիները այսօր հեռացվել են կուսակցությունից:

Պատասխանելով այն հարցին, թե ինքը պատրա՞ստ է արդյոք Հ-ՌԱԿ-ի հեղինակությունը բարձրացնելու նպատակով ՌԱԿ-ի ղեկավարության մեջ փոփոխություններ կատարելու նպատակահարմարությունը, Ե. Ազատյանը ասաց, որ անհատը դեռևս կուսակցություն չէ: Ժողովրդավարությունը պահանջում է հետևյալը. եթե մարդն ընտրվել է անդամակցության կամքով, ապա նույն կերպ էլ կարող է հեռանալ: Ինչ խոսք, փոփոխություններ պետք է կատարվեն: Դա թարմ շունչ կհաղորդի կուսակցության գործունեությանը և ինքնազտում կլինի, մի բան, որը միշտ էլ օգտակար է բոլոր կուսակցությունների համար:

Անի. Հարությունյան